

Շիրակի պետական համալսարանը 2022-2023 ուստարում ուսանողի սոցիալական վիճակի և բարձր առաջադիմության արդյունքների հաշվառմամբ, իր միջոցների հաշվին ուսման վարձի մասնակի փոխհատուցում /զեղչ/ է տրամադրում հետևյալ սոցիալական խմբերին*.

Առկա/ Հեռակա ուսուցում /բակալավր և մագիստրատուրա/

3.6.2 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին՝ մինչև 23 տարին լրանալը - **50% զեղչ**

3.6.3 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ /միաձնող/ ուսանողներին - **50% զեղչ**,

3.6.4 մինչև 1 տարեկան երեխա ունեցող ուսանողներին - **50% զեղչ**,

ՄՈԳԻ ՇԵՄ ԲԱԿԱԼԱՎՐ	ՄՈԳ ՇԵՄ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ	ԶԵՂՉԻ ՉԱՓ
76	86	50%

3.6.5 3 և ավելի անչափահաս երեխա կամ 3 և ավելի ուսանող ունեցող ընտանիքների ուսանողներին- **30% զեղչ**,

ՄՈԳԻ ՇԵՄ ԲԱԿԱԼԱՎՐ	ՄՈԳ ՇԵՄ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ	ԶԵՂՉԻ ՉԱՓ
76	86	30%

3.6.6 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողներին - **30% զեղչ**

ՄՈԳԻ ՇԵՄ ԲԱԿԱԼԱՎՐ	ՄՈԳ ՇԵՄ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ	ԶԵՂՉԻ ՉԱՓ
76	86	30%

3.6.7 Մարտական հերթապահություն իրականացնող զորամասում մարտական հերթապահության կամ գործողության մեջ ընդգրկված պարտադիր զինվորական ծառայություն անցած ուսանողներին, ինչպես նաև պայմանագրային զինծառայության ընթացքում ապրիլյան հերթապահություն իրականացրած կամ ապրիլյան գործողություններին մասնակից ուսանողներին

- մարտական հերթապահություն՝ **30% զեղչ**, ապրիլյան պատերազմում մարտական հերթապահություն՝ **50% զեղչ**, մարտական գործողություն՝ **70% զեղչ**,

3.6.8 Սոցիալապես անապահով և ընտանիքի անապահովության գնահատման համակարգում հաշվառված /ընտանիքի անապահովության սահմանային միավորից ցածր միավոր /0-27.99/ ունեցող ընտանիքների/ ուսանողներին - **20% զեղչ**,

3.6.9 Հեռավոր լեռնային և սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների երեխա- ուսանողներին - **30% զեղչ**

3.6.10 Մարզական և ստեղծագործական ակնառու հաջողություն ունեցող ուսանողներին. - **30% զեղչ**.

- Աշխարհի, Եվրոպայի և Հայաստանի չեմպիոն ուսանողներ, Օլիմպիական խաղերի մրցանակակիրներ,
- արտասահմանյան կամ հանրապետական մենահամերգ կամ ցուցահանդես ունեցած ուսանողներ,

- միջազգային կամ հանրապետական ուսանողական առարկայական օլիմպիադաների մրցանակակիրներ,
- միջազգային կամ հանրապետական ՈՒԳԸ գիտաժողովի մրցանակակիրներ:

3.6.11 Փոխատեղման /ռոտացիա/ մրցույթի արդյունքում 0.1 միավոր տարբերությամբ վճարովի համակարգ տեղափոխված ուսանողներին - **50% զեղչ**:

3.6.12 Համալսարանի ռեկտորի, մանդատային հանձնաժողովի առաջարկությամբ և որոշմամբ ուսման վարձ մասնակի փոխհատուցում է տրամադրվում առանձնահատուկ դեպքերում՝ այլ կարգավիճակ ունեցող բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրով սովորող ուսանողներին:

Ուսման վարձի մասնակի փոխհատուցման հայտարարությունից հետո ուսանողի կամ նրա լիազոր անձի կողմից ներկայացված ժամկետանոց դիմումները կքննարկվեն մանդատային հանձնաժողովի կողմից՝ դիմումի ժամկետանցությունը հիմնավորող փաստաթղթերի առկայություն դեպքում:

Մի քանի արտոնությունների հավակնելու դեպքում ուսանողը կարող է օգտվել դրանցից միայն մեկից, որի դեպքում կիրառվում է մասնակի փոխհատուցման առավելագույն չափը:

* **3.6.2, 3.6.3, 3.6.7, 3.6.8, 3.6.9, 3.6.10, 3.6.12** կետերի զեղչն իրականացնելու համար ՄՈԳ-ի նվազագույն շեմը սահմանել **40** միավորը: